Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек.  A4ScanDoc.com

# Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր

«21» [illegible] 2012թ. ք. Սպիտակ

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ Գ. Սահակյանի /այսուհետև՝ «Վարձատու»/՝ մի կողմից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Գագիկ Եգանյանի, որի անունից, համաձայն 31.01.2012թ. ԳԵ/7.2/532-12 լիազորագրի, որպես կոմիտեի ներկայացուցիչ, հանդես է գալիս կոմիտեի աշխատակազմի «Սպիտակ» սպասարկման գրասենյակի պետ Կարլեն Լենիկի Աղումյանը(անձնագիր՝ AF 0525443, տրված 30.01.2002թ. 052 կողմից, հաշվառված Հայաստանի Հանրապետության Լոռու մարզ, քաղաք Սպիտակ, Ս. Ավետիսյան բն. 53) /այսուհետ՝ «Վարձակալ»/՝ մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

## 1. Պայմանագրի առարկան

1.1 Սույն պայմանագրով՝ Վարձատուն պարտավորվում է վճարի դիմաց Վարձակալի ժամանակավոր օգտագործմանը հանձնել ոչ բնակելի տարածք (այսուհետ՝ Օբյեկտ), որը գտնվում է Սպիտակ քաղաքի Շահումյան փողոցի թիվ 7 hասցեում, Սպիտակի քաղաքապետարանի վարչական շենքի 1-ին հարկում 60 քմ (որպես աշխատասենյակներ):

1.2. Սույն պայմանագիրը կնքվում է 5 (հինգ) տարի ժամկետով:

1.3. Օբյեկտը սեփականության իրավունքով պատկանում է Վարձատուին, համաձայն ՀՀ անշարժ գույքի 16.07.99թ. տրված N 012689 սեփականության իրավունքի վկայականի:

## 2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1 Վարձատուն իրավունք ունի՝

2.1.1 Վարձակալից պահանջել Օբյեկտն օգտագործել սույն պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:

2.1.2 Պահանջել վարձավճարի ժամանակին վճարում

2.1.3 Պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պահանջել ազատել զբաղեցրած տարածքը:

2.1.4 Վարձակալից պահանջել կատարել Օբյեկտի ընթացիկ և հիմնական վերանորոգումը, շինմոնտաժային աշխատանքներն իրականացնել միայն Վարձատուի գրավոր համաձայնությամբ:

2.1.5 Դադարեցնել վարձակալության պայմանագրի գործողությունը՝ այդ մասին նախապես երկու ամիս առաջ Վարձակալին տեղեկացնելով:

2.2 Վարձատուն պարտավոր է՝

2.2.1 Օբյեկտը Վարձակալին հանձնել սույն պայմանագրի պայմաններին. և դրա նշանակությանը համապատասխանող վիճակում:

2.2.2 ոչ ուշ, քան երկու ամիս առաջ, Վարձատուին գրավոր տեղեկացնել վարձակալված Օբյեկտի սպասվելիք ազատման մասին՝ կապված ինչպես պայմանագրի ժամկետն ավարտվելու, այնպես էլ դրա վաղաժամկետ դադարեցնելու հետ

2.3 Վարձակալն իրավունք ունի

2.3.1. պահանջել Վարձատուից իրեն տրամադրել Օբյեկտը բարվոք վիճակում

2.3.1. Օբյեկտն օգտագործելու համար օգտվելու ընդհանուր մուտքից

2.3.2. պահանջել Վարձատուից սույն պայմանագրով սահմանված կարգով իրեն հանձնել Օբյեկտը:

2.4. Վարձակալը պարտավոր է՝

2.4.1. Օբյեկտն օգտագործել պայմանագրի պայմաններին և դրա նշանակությանը համապատասխան:

2.4.2. ժամանակին վճարել Օբյեկտն օգտագործելու համար սույն պայմանագրի 3-րդ կետում նախատեսված վարձավճարը.

2.4.3. Վարձակալած օբյեկտի տարածքներում պահպանել սանիտարահակա-համաճարակային կայանների, պետհրշեջ վերահսկողության մարմինների պահանջները:

2.4.4. Օբյեկտը և դրան հարող տարածքը պահպանել պատշաճ սանիտարական վիճակում:

2.4.5. Առանց վարձատուի գրավոր համաձայնության չկնքել գրավի, ենթավարձակալության պայմանագրեր:

2.4.6. Օբյեկտն ազատելիս այն հանձնել բարվոք վիճակում:

## *3. Պայմանագրով կատարվող վճարները և հաշվարկները*

3.1.Վարձակալած օբյեկտի համար ամսական վարձավճարը սահմանվում է 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ՝ ներառյալ ջեռուցման և էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց վճարները:

3.2.Վարձակալը վարձատուի հաշվին փոխանցում է վարձավճարը պայմանագրի՝ ուժի մեջ մտնելու պահից յուրաքանչյուր ամսվա համար դրան հաջորդող ամսվա 15-ից ոչ ուշ:

3.3.Վարձավճարի չափը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում:

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

### *4. Պայմանագրի միակողմանի լուծման հիմքերը*

4.1. Վարձատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Վարձակալը՝

4.1.1. Օբյեկտն օգտագործել է սույն պայմանագրի պայմանների կամ դրա նշանակության էական կամ բազմակի խախտումներով;

4.1.2. էականորեն վատթարացրել է Օբյեկտի վիճակը:

4.1.3. Սույն պայմանագրով սահմանված վճարման ժամկետը լրանալուց հետո երկու անգամից ավելի չի մուծել վարձավճարը.

4.2. Վարձակալն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե՝

4.2.1. Վարձատուն Վարձակալի օգտագործմանը չի տրամադրել Օբյեկտը կամ խոչընդոտներ է ստեղծել Օբյեկտը պայմանագրի պայմաններին կամ դրա նշանակությանը համապատասխան օգտագործելու համար:

4.2.2. Հանգամանքների բերումով, որոնց համար Վարձակալը պատասխանատու չէ, Օբյեկտը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի:

### *5. Այլ պայմաններ*

5.1. Պայմանագրի գործողությունը կարող է դադարել կողմերի համաձայնությամբ ցանկացած այլ ժամանակ:

5.2. Պայմանագրում կատարվող փոփոխությունները և լրացումները կողմերը քննարկում են մեկամսյա ժամկետում և ձևակերպում լրացուցիչ համաձայնագրերով:

5.3. Կողմերի միջև ծագած վեճերը կարգավորվում են երկկողմ համաձայնությամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով՝ երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Կողմերին տրվում է մեկական օրինակ, իսկ մեկ օրինակը պահվում է Սպիտակի նոտարական գրասենյակում:

5.5. Պայմանագիրը ուժի մեջ է մտնում Օբյեկտի նկատմամբ վարձակալության իրավունքը 30-օրյա ժամկետում ՀՀ Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանումում գրանցվելուց հետո:

### *6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները*

| Վարձատու՝ | Վարձակալ՝ |
|---|---|
| Սպիտակի քաղաքապետարան | ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե |
| ք.Սպիտակ, Շահումյան 7 | ք. Երևան, [illegible] 7 |
| Հ/Հ 900245161154 | Հ/Հ |
| Սպիտակի ՏԳԲ | ՀՎՀՀ 02534328 |
| ՀՎՀՀ 06801433 | «Սպիտակի [illegible] գրասենյակի պետ՝ Կ. Աղումյան |
| Քաղաքապետ՝ Գ.Սահակյան | Կ.Տ. |
| Կ.Տ. | /ստորագրություն/ |
| /ստորագրություն/ | |

________ 2012թ. Սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ ________ նոտարական գրասենյակում ________ կողմից: Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ. Կողմերի ինքնությունը, նրանց գործունակությունը, ինչպես նաև անշարժ գույքի նկատմամբ Սպիտակի քաղաքապետարանի իրավունքները ստուգված են:

ԳՐԱՆՑՎԱԾ Է ՍԵՂԱՆԱՄԱՏՅԱՆՈՒՄ ________ ով

ԳԱՆՁՎԱԾ Է ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔ ________

ՊԵՏԱԿԱՆ ՆՈՏԱՐ ________

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՎԿԱՅԱԿԱՆ
## ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ

Սույն վկայականով հաստատվում է «11» Ապրիլի 2012 թվականին գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական մատյանում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը հետևյալ տվյալներով.

### 1. ԳՐԱՆՑՎԱԾ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍՈՒԲՅԵԿՏ (ՆԵՐ)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆՆ ԱՌԸՆԹԵՐ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱԴԱՍՏՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ

### 2. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԸ ԵՎ ԱՆՎԱՆՈՒՄԸ

Մարզ Լոռի, համայնք Սպիտակ ք. Շահումյան փողոց թիվ 7 վարչական շենք

### 3. ԳՐԱՆՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Վարձակալության պայմանագիր թիվ 930, 21/03/2012թ.

### 4. ՀՈՂԱՄԱՍԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

Կադաստրային ծածկագիրը՝

Մակերեսի չափը (հա)՝

Նպատակային նշանակությունը՝

Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝

Գրանցված իրավունքի տեսակը՝

Գրանցումը իրականացնող պաշտոնատար անձի անունը, ազգանունը՝ Անի Պետրոսյան Լոռի ՏՍ

զբաղեցրած պաշտոնը՝ Լոռի ՏՍ անշարժ գույքի ռեգիստր

ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի՝ վկայականը տրամադրող սպասարկման գրասենյակի
Կ.Տ.



Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

## 5. ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ

1) Նպատակային նշանակությունը՝ Հասարակական

2) Բնութագրերը ըստ առանձին շինությունների՝

| Հ/հ | Կադաստրային ծածկագիրը | Տեսակը | Մակերեսի չափը | Գրանցված իրավունքի տեսակը |
|---|---|---|---|---|
| **1** | **06-006-0503-0007-001** | **Քաղաքապետարան** | **60.7 ք.մ.** | **ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ** |

*Լրացուցիչ նշումներ և տեղեկություններ*

Տարածքը վարձակալության իրավունքով տրամադրված է 5 տարի ժամանակով, ամսեկան վարձավճարը կազմում է 90000դրամ:



Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
### 21.03.2012թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի

ք Երևան

«01» փետրվարի 2013թ

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ Գ Սահակյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձատու), մի կողմից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Գ. Եգանյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձակալ), մյուս կողմից, հիմք ընդունելով 21.03.2012թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 3-րդ կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

Հիմք ընդունելով Պայմանագրի 3-րդ կետի պահանջները՝ սահմանել Պայմանագրի 1.1 կետում նշված անշարժ գույքի ամսական վարձավճարը 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ջեռուցման և էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց վճարները, 2013թ.-ի համար 01.01-31 12.2013թ.թ ՝ 1080000 (մեկ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով՝ ներառյալ հարկատեսակները

**2. Կողմերի պարտավորությունները**

2.1 Պայմանագրով և սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն Հայմանագրի ընդհանուր գնի 0.5 %-ի չափով:

2.2 Պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ վարձավճարի 0,05%-ի չափով

2.3 Սույն Համաձայնագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից·

2.4 Պայմանագրով և սույն Համաձայնագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով·

2.5 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև 2013 թվականի դեկտեմբերի 31-ը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

3 3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ.

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Վարձատու**

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի քաղաքապետարան
Ք Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հհ՝ 900245161154
ՀՀ ֆինանսների նախարարության

Քաղաքապետ՝ _____ Գ.Սահակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Վարձակալ**

ՀՀ ԿԱԱԳԿՊԿ
ք.Երևան, Արշակունյաց7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Աշխատակազմի ղեկավար՝ _____ Գ.Եգանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**

**21.03.2012թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի**

ք. Երևան

« 01 » 02 2014թ.

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ Գ.Սահակյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձատու), մի կողմից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա.Անանյանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձակալ), մյուս կողմից, հիմք ընդունելով 21.03.2012թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 3-րդ կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

**1.Համաձայնագրի առարկան**

Հիմք ընդունելով Պայմանագրի 3-րդ կետի պահանջները՝ սահմանել Պայմանագրի 1.1 կետում նշված անշարժ գույքի ամսական վարձավճարը 90000 (իննսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ջեռուցման և էլեկտրաէներգիայի ծախսի դիմաց վճարները, 2014թ.-ի համար 01.01-31.12.2014թ.թ.՝ 1080000 (մեկ միլիոն ութսուն հազար) ՀՀ դրամ ընդհանուր գումարով՝ ներառյալ հարկատեսակները:

**2. Կողմերի պարտավորությունները**

2 1 Պայմանագրով և սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն Հայմանագրի ընդհանուր գնի 0.5 %-ի չափով·

2.2 Պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ վարձավճարի 0,05%-ի չափով:

2.3 Սույն Համաձայնագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից:

2.4 Պայմանագրով և սույն Համաձայնագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.5 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

**3. Այլ պայմաններ**

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները**

**Վարձատու**

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի քաղաքապետարան
Ք.Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հh՝ 900245161154
ՀՀ ֆինանսների նախարարության

Քաղաքապետ __________ Գ.Սահակյան
(ստորագրություն)

Կ.Տ

**Վարձակալ**

ՀՀ ԿԱԱԳԿՊԿ
ք.Երևան, Արշակունյաց7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Աշխատակազմի ղեկավար՝ __________ Ա.Անանյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек. A4ScanDoc.com

## ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 3

### 21.03.2012թ. կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի

« 22 » ........ 2014թ

ք. Երևան

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի քաղաքապետարանը, ի դեմս քաղաքապետ Գ.Սահակյանի, որը գործում է քաղաքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձատու), մի կողմից և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Վ.Հարությանի, որը գործում է Կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վարձակալ), մյուս կողմից, հիմք ընդունելով 21.03.2012թ կնքված անշարժ գույքի վարձակալության պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.2-րդ կետով սահմանված պահանջները, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

### 1.Համաձայնագրի առարկան

Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի 1.1 կետում նշված <<66քմ>> բառերը փոխարինել <<30.8քմ>> բառերով:

1.2 Պայմանագրի 3.1 կետում նշված <<90000 /իննսուն հազար/>> բառերը փոխարինել <<40000 /քառասուն հազար/>> բառերով՝

1.3 2014թ.-ի համար 01.11-31.12.2014թ.թ. վարձավճարի չափը սահմանել 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝

1.4 Սույն Համաձայնագրի 1.1 և 1.2 կետերով սահմանված պահանջները գործում են 2014 թվականի նոյեմբերի 1-ից:

### 2. Կողմերի պարտավորությունները

2.1 Պայմանագրով և սույն Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Վարձատուից գանձվում է տուգանք՝ սույն Հայմանագրի ընդհանուր գնի 0.5 %-ի չափով:

2.2 Պայմանագրով նախատեսված Օբյեկտի հանձնման ժամկետը խախտելու դեպքում Վարձատուից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ վարձավճարի 0,05%-ի չափով:

2.3 Սույն Համաձայնագրով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Վարձատուին վճարման ենթակա գումարներից՝

2.4 Պայմանագրով և սույն Համաձայնագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ ձևով կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

2.5 Տուգանքի և տույժի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց՝

### 3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից, գործում է մինչև 2014 թվականի դեկտեմբերի 31-ը և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի կողմից Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

**Վարձատու**

ՀՀ Լոռու մարզի Սպիտակի քաղաքապետարան
Ք.Սպիտակ, Շահումյան 7
ՀՎՀՀ՝ 06801433
Հ/հ՝ 900245161154
ՀՀ ֆինանսների նախարարության

Քաղաքապետ ____________ Գ.Սահակյան
(ստորագրություն)

Կ.Տ.

**Վարձակալ**

ՀՀ ԿԱԱԳԿՊԿ
ք.Երևան, Արշակունյաց7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/հ 900013220026
ՀՎՀՀ 02534328

Աշխատակազմի ղեկավար՝ ____________ Վ.Հարությ
(ստորագրություն)

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Требуется регистрация A4ScanDoc. Пробный период истек.  A4ScanDoc.com

## Վավերացման մակագրություն կնքված պայմանագրի վրա

Երկու հազար տասնչորս թվականի սեպտեմբերի քսաներկուսին սույն պայմանագիրը վավերացված է իմ՝ Սպիտակի տարածքային նոտար Վաչիկ Մաթոսյանիս կողմից:
Կողմերը պայմանագիրը ստորագրեցին իմ ներկայությամբ:
Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունները, գործունակությունները և իրավունակությունները ստուգված են:
Գրանցված է սեղանամատյանում 1613 ով:
Գանձված է պետական տուրքի և ծառայության վճար՝ համաձայն
ՀՀ «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» օրենքների:

ՆՈՏԱՐ՝

Отсканировано программой A4ScanDoc, сайт программы www.a4scandoc.com.com

Նոտարական ակտի կոդ: 504-20180130-117-2171189
Նոտարական ակտի գաղտնագիր: QC6O17

# ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

**21.03.2012 թվականին կնքված սեղանամատյանում թիվ 930 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում փոփոխություն կատարելու մասին**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, ՙՙՍպիտակՙՙ նոտարական տարածք:
Երկու հազար տասնութ թվականի հունվարի երեսունին

**ՀՀ Լոռու մարզի Սպիտակ քաղաքային համայնքը՝** (գտնվելու վայրը՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահումյան 7) **ի դեմս համայնքի ղեկավար ԳԱԳԻԿ ՀԵՆՐԻԿԻ ՍԱՀԱԿՅԱՆԻ**, ծնված 27.07.1965թ., ՀՀ քաղ. անձնագիր՝ AH0682528, տրված 052 ստորաբաժանման կողմից 21.10.2008թ., հաշվառված՝ ք. Սպիտակ, ՈւզբեկականԿ-5 թղմ., տուն 4 հասցեում, ով գործում է ՀՀ թիվ 29 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 22.04.2016թ. թիվ 26-Ա որոշմամբ (ՀՀ Վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության վարչության վկայական №Բ 004762*, տրված 25.06.2000թ.) և համաձայն կանոնադրության, այսուհետ **ԿՈՂՄ 1** մի կողմից, և **Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկը՝** (գտնվելու վայրը՝ ք. Երևան, Արշակունյաց 7) ի դեմս աշխատակազմի ղեկավար Վարդան Ռուբիկի Հասրաթյանի, ում անունից համաձայն 22.01.18թ. N ՎՀ/214-18 լիազորագրի, որպես կոմիտեի ներկայացուցիչ հանդես է գալիս կոմիտեի աշխատակազմի ՙՙՍպիտակՙՙ սպասարկման գրասենյակի պետ **ՄՈՒՇԵՂ ՎԼԱԴԻԿԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԸ,** ծնված 19.08.1964թ., նույնականացման քարտի համարը՝ 008481194, տրված 057 ստորաբաժանման կողմից 22.07.2016թ., հաշվառված՝ Արմավիրի մարզ, Մուսալեռ, Բաղրամյան փող., տ. 55 հասցեում, **ԿՈՂՄ 2** մյուս կողմից,

*կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.*

**21.03.2012 (քսանմեկը մարտի երկու հազար տասներկու) թվականին** կնքված սեղանամատյանում թիվ **930 (ինը հարյուր երեսուն)** համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

Պայմանագրում՝ 1.2 կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝
**Սույն պայմանագրի գործողության ժամկետ է սահմանվում մինչև 31.12.2019թ.**

Սույն պայմանագիրը հանդիսանում է 21.03.2012թ. կնքված սեղանամատյանում թիվ 930 համարով գրանցված Ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն Պայմանագրի վավերացման հետ կապված ծախսերը կատարում է Կողմ 2-ը:

Սույն Պայմանագիրը կազմված է հայերեն լեզվով 4 (չորս) օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ, մեկական օրինակ տրամադրվում է կողմերից յուրաքանչյուրին, իսկ մեկ օրինակը պահվում է Սպիտակի տարածքային նոտարական գրասենյակում:

Սույն պայմանագիրը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համապատասխան տարածքային ստորաբաժանումում, **նոտարական վավերացման օրվանից սկսած երեսուն աշխատանքային օրվա ընթացքում:**

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

Կողմ 1

Կողմ 2

Վավերացման մակագրություն կնքված Պայմանագրի վրա

**Երկու հազար տասնութ թվականի** [illegible]

Սույն Պայմանագիրը վավերացված է իմ՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի ՛՛Սպիտակ՛՛ նոտարական տարածքի նոտար ՎԱՉԻԿ ՄԱԹՈՍՅԱՆԻՍ կողմից:
Կողմերը սույն Պայմանագիրը ստորագրել են իմ ներկայությամբ:
Կողմերի, նրանց ներկայացուցիչների ինքնությունը, գործունակությունը և (կամ) իրավունակությունը ստուգված են:

Գրանցված է սեղանամատյանում N 211

Գանձված է պետական տուրք երկու հազար ՀՀ դրամ և ծառայության վճար ութ հազար ՀՀ դրամ՝ համաձայն «Պետական տուրքի մասին» և «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների:

Նոտար Վաչիկ Ալեքսանի Մաթոսյան